ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 08.02.2019թ. հ.01/96 գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի 2019 թվականի՝ Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման ծրագրով նախատեսված է կառուցել 175 հատ թեքահարթակ, ինչպես նաև 2018 թվականից սկսած՝ թեքահարթակների կառուցման ծրագրի շրջանակներում, իրականացվում են վնասված և կտրուկ թեքություն ունեցող թեքահարթակների վերանորոգման ու վերակառուցման աշխատանքները:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի հետ համատեղ իրականացվող սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև Երևան քաղաքի Հ. Կարապենցի անվան հ.6 հիմնական դպրոցի վերակառուցման և նորմատիվ տեխնիկական պայմաններին համապատասխանող թեքահարթակների կառուցման աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ